ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի ելույթը հունիսի 29-ին Ավանում տեղի ունեցած հուշակոթողի բացման արարողության ժամանակ

Հարգելի հյուրեր, միջոցառման մասնակիցներ,

Հունիսի 29-ին մեր հանրապետությունում նշվում է անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրը:

Այդ առիթով մարզային միջոցառումն այս անգամ անցկացվում է Ավանում, որտեղ երախտագետ ավանցիներն իրենց հարգանքի տուրքն են մատուցում մարզի 11 անհայտ կորածներին:

Նախորդ տարի, Հայոց ցեղասպանության 100 ամյակի կապակցությամբ, գյուղի բարերար Պետրոս Պետրոսյանի միջոցներով հիմնվել է ,,Անմահների պուրակ,, և տեղադրվել է այս մեծադիր խաչը:

Այսօր նույն բարերարի նախաձեռնությամբ հենց այս պուրակում կանգնեցվել է,,Փառք հայոց զինվորին,, խորագիրը կրող հուշակոթողը: Այս աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել նաև համագյուղացիները:

Ես նույնպես իմ երախտիքի և հարգանքի տուրքն եմ մատուցում մարզի 11 անհայտ կորածներին և շնորհակալություն հայտնում միջոցառման կազմակերպիչներին, բարերար Պետրոս Պետրոսյանին, Ավանի ողջ հասարակությանը և քանգդակագործ Վարազդատ Համբարձումյանին:

Ես ցանկանում եմ, որ այլևս երբեք ռումբեր չպայթեն: Ոչ զոհվածներ և ոչ էլ ահնայտ կորածներ ունենանք: Թող հարատև խաղաղություն լինի, որի երաշխավորը մեր հզոր ու անպարտելի բանակն է, իսկ մենք՝ բոլորս, պարտավոր ենք մեր ողջ հնարավորություններն ու ներուժը գործադրել բանակի՝ էլ ավելի հզորացման ու ամրապնդման համար: